

ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՎԱՐԴԱՊԵՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՏՎՉՈՒԹՅՈՒՆ

Սույն թվականի հոկտեմբերի 3-ին հոգևոր ճեմարանի հանդիսությունների դահլիճում, Վեհափառ Հայրապետի բարձր նախագահությամբ, տեղի ունեցավ Մայր Աթոռի միաբան, Ադրբեջանի հայոց թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Անանիա վրդ. Արաբաջյանի ծայրագույն վարդապետական թեկի պաշտպանությունը:

Սույն պաշտպանությանը ներկա էին Կ. Պոլսի հայոց Պատրիարք Ամենապատիվ Տ. Շնորք արքեպ. Գալուստյանը, Հայ Եկեղեցու ներքին և արտասահմանյան թեմերի առաջնորդներ, Մայր Աթոռի միաբանությունը, հոգևոր ճեմարանի դասախոսական կազմն ու ուսանողությունը, մայրավանքի պաշտոնեությունը և այլ հյուրեր:

Մայր Աթոռի դիվանապետ Տ. Ներսես եպս. Պոզապալյանը իր բացման խոսքում նշեց, որ ծայրագույն վարդապետական աստիճան ստանալու համար Տ. Անանիա վրդ. Արաբաջյանը գրել և Վեհափառ Հայրապետին էր ներկայացրել Եղիշե պատմիչի «Հայր մեր»-ի մեկնության» ուսումնասիրությունը:

Քննիչ հանձնաժողովը (անդամներ՝ Մայր Աթոռի դիվանապետ Տ. Ներսես եպս. Պոզապալյան, «Էջմիածին» ամսագրի խմբագրի պաշտոնակատար, հոգևոր ճեմարանի վաստակավոր ուսուցիչ Պարգև Շահբազյան և բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ Պետրոս Բեդիրյան), ծանոթանալով Տ. Անանիա վարդապետի աշխատությանը, գրավոր կերպով իր կարծիքը ներկայացրել էր Վեհափառ Հայրապետին:

Այնուհետև Տ. Ներսես սրբազանը հրավիրեց հոգեշնորհ Տ. Անանիա վարդապետին հանդես գալու իր թեկի բանավոր պաշտպանությամբ: Տ. Անանիա վարդապետը ներկաներին ամփոփ ձևով ներկայացրեց իր աշխատության նյութը և վերջում պատասխանեց հանձնաժողովի կողմից իրեն տրված հարցերին:

Բանավոր պաշտպանությունից հետո, քննիչ հանձնաժողովը, հետ խորհրդակցության, ամփոփելով բանավոր պաշտպանության արդյունքները, գրավոր ներկայացված թեկի ու նրա բանավոր պաշտպանության համար որպես ընդհանուր գնահատական նշանակեց «գերազանց»:

Վերջում Տ. Ներսես սրբազանը հրավիրեց Վեհափառ Հայրապետին ասելու իր օրհնության խոսքը: Հայոց Հայրապետը, իր հերթին, առաջարկեց Ամենապատիվ Տ. Շնորհք արքեպ. Գալուստյանին տալու իր օրհնությունը: Սրբազան պատրիարքը, այս հանդիսավոր առիթով, ողջունեց ներկաներին և իր շնորհակալական խոսքն ուղղելով Վեհափառ Հայրապետին՝ ասաց. «Ես նախ իմ շնորհակալությունը կհայտնեմ Վեհափառ Հայրապետին, ապա ամբողջ սրտով գոհունակություն կհայտնեմ այս գեղեցիկ պահի համար: Ուրախ ենք, որ Հայ Եկեղեցվո համար վարդապետական և ծայրագույն վարդապետական աստիճանի տվչությունը այլևս պատահականություն չէ, և հաճելի է հաստատել, որ մեր երիտասարդ վարդապետները իրենց թեկերու նյութերը կընտրեն հայ մատենագիրներու աստվածաբանական և դավանաբանական գործերեն: Ցանկալի պիտի ըլլար, որ մեր միաբանակից մյուս եղբայրները նման

առիթներով դիմեն աստվածաբանական նյութերու ուսումնասիրության»:

Վերջում Ամենապատիվ սրբազան հայրը ըստ արժանվոյն գնահատեց Տ. Անանիա վարդապետի թեկի պաշտպանությունը, նրան ցանկացավ նորանոր հաջողություններ Հայ Եկեղեցու ծառայության մեջ:

Հոկտեմբերի 8-ին, շաբաթ օրը, Օշականի Սուրբ Մեսրոպ Մաշտոց եկեղեցում, Մայր Աթոռի դիվանապետ Տ. Ներսես եպս. Պոլատյանի ձեռամբ, ծայրագույն վարդապետական աստիճան շնորհվեց Տ. Անանիա վրդ. Արաբաջյանին:

* * *

«Էջմիածին» ամսագրի խմբագրությունը շնորհավորում է Տ. Անանիա ծ. վրդ. Արաբաջյանին այս ուրախ առիթով և բարեմաղթում նրան նորանոր հաջողություններ իր ապագա հոգևոր-եկեղեցական, թեմական-վարչական գործունեության մեջ: